



Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ ընթացիկ տարվա առաջին երկու ամիսներին նավթի եւ կոնդենսատի արդյունահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 3,6 տոկոսով կամ 300 հազար տոննայով նվազել են՝ կազմելով 7,2 մլն տոննա: Այս մասին, «Արմենպրես»-ի հաղորդմամբ, հայտնում է «Թուրան» լրատվական գործակալությունը:

Վիճակագրական գերատեսչության տվյալներով՝ դիտարկվող ժամակահատվածում Ադրբեջանում առևտրային գազի արդյունահանումը կազմել է 2,9 մլրդ խմ, ինչը 5 տոկոսով ցածր է 2012 թ-ի հունվար-փետրվար ամիսների ցուցանիշերից: